Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 44

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Տ. Գալստյանը, Բ. Հարությունյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բաղալյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Ներսիսյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> և <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 15.05.2023թ. N 67-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Ատոմյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը քանդելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

9. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ղազարավան և Արտաշավան բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. Աշտարակ համայնքի Ուշի, Օհանավան և Ուջան բնակավայրերում թաղամասերի և փակուղիների համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. Նվիրատվությամբ անշարժ գույք ձեռք բերելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

13. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

14. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

15. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

16. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Բաղդասարյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի, 11-րդ հոդվածի 1-ին մասի, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 5-րդ, 14-րդ հոդվածների պահանջներով, սահմանել Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2025 թվականի տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի, 2-ի, 3-ի, 4-ի, 5-ի, 6-ի, 7-ի:

Զեկուցողը նշեց, որ ըստ էության որևէ փոփոխություն նախորդ տարվա համեմատ տեղի չի ունեցել և առաջարկեց ամբողջությամբ ընդունել այն, այնուհետև բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Բաղդասարյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 3-րդ մասերի պահանջներով.

1.Հաստատել Աշտարակ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն՝

/հազ. դրամ/

	Վարչական բյուջե	***Ֆոնդային բյուջե***	***Ընդամենը***
Եկամտային մաս	5031220.1	1900000.0	6931220.1
Ծախսային մաս	5044220.1	2155000.0	7199220.1
Դեֆիցիտ	- 13000.0	- 255000.0	- 268000.0
Պահուստային ֆոնդ	1250000.0	0	1250000.0

2. Հաստատել Աշտարակ համայնքի 2025թ.-ի տարեկան բյուջեի եկամտային մասը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հաստատել Աշտարակ համայնքի 2025թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հավելված 2-ի:

4. Հաստատել Աշտարակ համայնքի 2025թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասը՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հավելված 3-ի:

5. Հաստատել Աշտարակ համայնքի 2025թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդին), համաձայն հավելված 4-ի:

6. Հաստատել Աշտարակ համայնքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված 5-ի:

7. Հաստատել Աշտարակ համայնքի 2025թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հավելված 6-ի:

8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 4</u> - Հարկային արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>> օրենքների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի, 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի

սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն /հավելված 1/:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 5</u> - Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նվազագույն աշխատավարձի մասին>>, <<Կուտակային կենսաթոշակների մասին>> օրենքների պահանջներով, հաստատել Աշտարակի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /կցվում է հավելված՝ 1-35/: ՀՈԱԿ-ներում 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված աշխատողների համար նվազագույն աշխատավարձ սահմանել 104698 ՀՀ դրամ:

Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 6</u> - <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> և <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով, հաստատել <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը

և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի: Հաստատել <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 15.05.2023թ. N 67-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, կոմունալ տնտեսության, առևտրի, գովազդի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Գ. Ատոմյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով, ուժը կորցրած ճանաչել <<Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 15.05.2023թ. N 67-Ա որոշումը:

Բարձրացված հարցերին Գ. Ատոմյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը քանդելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հրապարակ N 6/4 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 02-001-0063-0042/, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը /տարադրամի փոխանակման և առևտրի սրահ/ Աշտարակ քաղաքի երաժշտական դպրոց

մուտք ու ելքի ճանապարհը սահմանված նորմերին համապատասխան ապահովելու և տարածքը բարեկարգելու նպատակով քանդելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Կոշ բնակավայրի 1-ին փողոց, N 9 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 02-061-0051-0033/, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը խաղահրապարակ և զբոսայգի կառուցելու նպատակով քանդելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ղազարավան և Արտաշավան բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 18.11.2024թ. N 2/փ-430 և 25.11.2024թ. N 2/փ-449 դրական եզրակացությունները՝ Ղազարավան և Արտաշավան բնակավայրերում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-068-0001-0021 ծածկագրով 0,1244հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը: Հաստատել Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիների սեփականություն հանդիսացող 02-020-0122-0029 ծածկագրով 1,2127հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության

խոտհարքի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը:

Նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել Աշտարակ համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում, Ղազարավան և Արտաշավան բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - Աշտարակ համայնքի Ուշի, Օհանավան և Ուջան բնակավայրերում թաղամասերի և փակուղիների համարակալման մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով.

1. Աշտարակ համայնքի ՈՒշի բնակավայրում գտնվող թաղամասին տալ 4 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, ՈՒշի բնակավայր, 4-րդ թաղամաս:

2. Աշտարակ համայնքի ՈՒշի բնակավայրում գտնվող թաղամասին տալ 5 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, ՈՒշի բնակավայր, 5-րդ թաղամաս:

3. Աշտարակ համայնքի ՈՒշի բնակավայրում գտնվող թաղամասին տալ 7 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, ՈՒշի բնակավայր, 7-րդ թաղամաս:

4. Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի 4-րդ փողոցից սկիզբ առնող փակուղուն տալ 2 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օհանավան բնակավայր, 4-րդ փողոց, 2-րդ փակուղի:

5. Աշտարակ համայնքի ՈՒջան բնակավայրի 19-րդ փողոց, 2-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, ՈՒջան բնակավայր, 19-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 1-ին փակուղի:

6. ՈՒշի, Օհանավան և ՈՒջան բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - Նվիրատվությամբ անշարժ գույք ձեռք բերելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ-ի գործառնական կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Հովհաննիսյանի 20.11.2024թ. թիվ 22-247՝ <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ-ի սեփականությունը հանդիսացող բանկոմատը Աշտարակ համայնքին նվիրելու մասին գրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու հրապարակում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 02-001-0167-0078/, <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ-ի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը /բանկոմատ/ նվիրատվությամբ ձեռք բերելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Որոշմամբ նախատեսված գործընթացի ավարտից հետո համաձայնություն տալ նշված անշարժ գույքը քանդելու համայնքի ղեկավարի առաջարկության վերաբերյալ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Ռուդիկ Հայրապետյանի լիազորված անձ Նիկոլ Հայրապետյանի 08.11.2024թ. N 12638 և N 12639, Մերուժան Հարությունյանի 15.11.2024թ. N 12944, Խաչիկ Բունիաթյանի 19.11.2024թ. N 13038, Հրաչ Գասպարյանի 20.11.2024թ. N 13090, Էդիկ Ղալաչյանի 21.11.2024թ. N 13160, Վարդան Բոբոխյանի լիազորված անձ Մարտին Մկրտչյանի 26.11.2024թ. N 13347, Դավիթ Մանուկյանի 26.11.2024թ. N 13360 և Իշխան Պետրոսյանի

29.11.2024թ. N 13601 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի 1-ին փողոց, N 59 հասցեում գտնվող, 02-068-0039-0022 ծածկագրով 891քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 3 000 000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-068-0039-0021 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Ռուդիկ Նիկոլի Հայրապետյանին:

2. Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրի 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, N 46/1 հասցեում գտնվող, 02-068-0039-0018 ծածկագրով 182քմ մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-068-0039-0003 ծածկագրով բնակավայրերի նշանակության այլ հողամասի սեփականատեր Ռուդիկ Նիկոլի Հայրապետյանին:

3. Աշտարակ համայնքի Կարբի բնակավայրի 2-րդ փողոց, 5-րդ փակուղի, N 1/1 հասցեում գտնվող, 02-058-0102-0080 ծածկագրից համայնքային սեփականություն հանդիսացող 45քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-058-0102-0011 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Մերուժան Դավիթի Հարությունյանին:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու փողոց, N 3/7 հասցեում գտնվող, 02-001-0191-0087 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 106,4քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 900 000 /ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0191-0006 և 02-001-0191-0074 ծածկագրերով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասերի սեփականատեր Խաչիկ Վազգենի Բունիաթյանին:

5. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Արա-1 թաղամաս, 3-րդ փողոց, N 65/1 հասցեում գտնվող, 02-001-0153-0053 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 288,1քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ /կադաստրային արժեքի 200%-ի չափով/ օտարել կից, ընդլայնվող 02-001-0153-0052 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հրաչ Թորոսի Գասպարյանին:

6. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի ՈՒլատիտիկ 2-րդ թաղամաս, 7-րդ փողոց, N 21/1 հասցեում գտնվող, 02-001-0117-0019 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 274քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0117-0038 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Էդիկ Նորիկի Ղալաչյանին:

7. Աշտարակ համայնքի Ագարակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 02-004-0213-0056 ծածկագրով 0,051հա հողամասը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով՝ 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից՝ ընդլայնվող 02-004-0213-0020 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականատեր Վարդան Գրիգորի Բոբոխյանին:

8. Աշտարակ համայնքի Փարպի բնակավայր, Ագարակի խճուղի, N 1/1 հասցեում գտնվող, 02-110-0152-0044 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 1063քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 6 000 000 /վեց միլիոն/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-110-0152-0026 ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր Դավիթ Հունանի Մանուկյանին:

9. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի 3-րդ թաղամաս, N 22/2 հասցեում գտնվող, 02-001-0324-0138 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 45քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել կից, ընդլայնվող 02-001-0324-0132 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Իշխան Սամվելի Պետրոսյանին:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Արտակ Թովմասյանի 01.11.2024թ. N 12357 և N 12358, Հովհաննես Արիստակեսյանի 19.11.2024թ. N 13044 և Սամվել Զարգարյանի 20.11.2024թ. N 13103՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով.

1. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0201-0035 ծածկագրով, Արտակ Վաչագանի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող 0,25132հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /այլ հողատեսք/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /չորանոցի կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0201-0036 ծածկագրով, Արտակ Վաչագանի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող 0,5479հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /այլ հողատեսք/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /անասնապահական տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0332-0005 ծածկագրով, Հովհաննես Ռուբենի Արիստակեսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,3142հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության,

իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Հավանություն տալ Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի 02-087-0215-0013 ծածկագրով, Սամվել Վոլոդյայի Զարգարյանին սեփականության իրավունքով պատկանող 0,5273հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /վարելահող/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական /ջերմոցային տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 15 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 23.07.2024թ. N 2-12 եզրակացությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման պահանջներով, հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը:

Համայնքի ավագանու անդամները դեմ արտահայտվեցին նշված որոշման նախագծի ընդումանը՝ նշելով, որ Նոր Երզնկա բնակավայրը հանդիսանում է Աշտարակ համայնքի զարգացող գյուղերից մեկը, որը հետաքրքրություն է ներկայացնում նաև ներդրողների համար՝ ուստի առաջարկվում է վերանայել նախագծում նշված կառուցապատման հարկայնությունը:

17 - ԴԵՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 16 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի փետրվարի 11-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2024 թվականի դեկտեմբերի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ	_____
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	_____
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	_____
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ